



ՄԱՆԿԱՎԱՐԺ



ՈՍԿԵ ՀՈՒՇԱՄԵՂԱԸ ՀՐԱԶՈՒԿ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ



Վանաձորի պետական համալսարանում տոնական միջոցառմամբ նշվեց քիմիայի ամբիոնի վարիչ, քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հրաչիկ Ղազարյանի ծննդյան 75-ամյակը:

Մեծ է Հրաչիկ Ղազարյանի ավանդը գիտության մեջ, որի համար արժանացել է բազում մրցանակների: Նա չի թաքցնում, որ աշխատանքային ուժն ու եռանդն իր մեջ անսպառ են: Պրոֆեսորը հարգված ու սիրված է ոչ միայն բուհի պրոֆեսորադասախոսական կազմի, այլև ուսանողների կողմից: Նա վարում է «Ընդհանուր և անօրգանական քիմիա», «Ֆիզիկական և կոլոիդային քիմիա», «d և f էլեմենտների քիմիա», «Ֆոտոքիմիա», «Հատուկ դասընթաց», «Բարձր էներգիաների քիմիա» դասընթացները, զբաղվում է բարձր էներգիաների քիմիայի խնդիրներով:

ՎՊՅ ռեկտոր Գուրգեն Խաչատրյանը շնորհավորեց հորեյարին և նրան շնորհեց բուհի բարձրագույն պարգևը՝ Ոսկե հուշամեդալ. «ՎՊՅ գիտական խորհրդի որոշմամբ՝ ծննդյան 75-ամյակի կապակցությամբ և գիտությանը նատուցած ծառայությունների, բարձրորակ գիտամանկավարժական կադրերի պատրաստման գործում ունեցած ավանդի համար քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, քիմիայի ամբիոնի վարիչ Հրաչիկ Ղազարյանը պարգևատրվում է «Վանաձորի Հովի. Թումանյանի անվան պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության Ոսկե հուշամեդալով»:

Շնորհավորանքի ջերմ խոսքեր հնչեցրեց կենսաբանաքիմիական ֆակուլտետի ղեկան Ջարուհի Վարդանյանը, ում բախտ է վիճակվել լսել Հ. Ղազարյանի դասախոսությունները. «Շնորհակալություն, որ օգնում եք մեր ֆակուլ-

տետին լինել ամուր հիմքերի վրա, շնորհակալություն Ձեր բարի խորհուրդների համար: Ձեզ քաջառողջություն և երկար տարիների բեղուն աշխատանք են մաղթում»:

ՎՊՅ բուսաբանության ամբիոնի վարիչ, պրոֆեսոր Ռաֆիկ Եղոյանի հավաստմամբ՝ հարգանքի է արժանի Հրաչիկ Ղազարյանի անցած դպրոցը. «Անչափ ուրախ եմ, որ մեր բուհում ավանդական է դարձել արժանի մասնագետների մեծարումը: Ես նույնպես միանում եմ հնչած բարեմաղթանքներին: Սրտանց շնորհավորում եմ Հ. Ղազարյանին՝ մաղթելով առողջություն, ընտանեկան երջանկություն»:

Վաստակավոր մանկավարժի կյանքն ու գործունեությունը ներկայացրեց քիմիայի ամբիոնի դասախոս, քիմիական գիտությունների թեկնածու, դոցենտ Սամվել Մկրտչյանը:

Անուսին հորեյարին բանաստեղծական գեղեցիկ տողերով իրեց բուսաբանության և աշխարհագրության ամբիոնի դասախոս Կիմա Ղազարյանը:

Շնորհավորանքի խոսքերն ընդմիջվում էին կենսաբանաքիմիական ֆակուլտետի շնորհալի ուսանողների մշակութային գեղեցիկ կատարումներով:

Միջոցառման ավարտին Հրաչիկ Ղազարյանը շնորհակալություն հայտնեց համալսարանի ռեկտորին, իր ղեկավարած ամբիոնի աշխատակիցներին և բոլոր ներկաներին՝ ուշադրության և գեղեցիկ օրվա համար: Նա ամենևին էլ չթաքցրեց, որ ունեցած բազում մրցանակների ու մեդալների մեջ իր համար ամենաթանկն ու սպասվածը հենց բուհի հուշամեդալն էր:

ՀԱՅԱՍՏԱՆԸ ԵՎ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ԻՆՏԵԳՐՈՒՄԸ



Օրերս Վանաձորի պետական համալսարանում «Ինտեգրացիա և զարգացում» հի-ի կողմից անցկացվեց «Հայաստանը և Եվրասիական ինտեգրումը» խորագրով միջազգային համաժողով:

Համաժողովի մասնակիցներին ողջունեց ՎՊՀ ռեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գուրգեն Խաչատրյանը՝ նշելով, որ համաժողովը խիստ ներկայացուցչական կազմով է հանդես գալիս. ՎՊՀ-ում էին Մոսկվայի ԵվրԱզԵՄ-ի ինստիտուտի տնօրեն, Ռուսաստանի գիտությունների ակադեմիայի Եվրասիական տնտեսական ինտեգրացիայի հարցերով գիտական խորհրդի բյուրոյի անդամ Վլադիմիր Լեպեխինը, «Ինտեգրացիա և զարգացում» հի նախագահ Արամ Սաֆարյանը, Ղազախստանի դեսպանությունից և Հայաստանի տարբեր բուհերից ներկայացուցիչներ:

Հանդիպումը նպատակ ուներ բարձրացնել հասարակության իրազեկության մակարդակը Եվրասիական ինտեգրման ճանապարհին:

Առաջին զեկույցով հանդես եկավ ճանաչված ռուս վերլուծաբան Վ. Լեպեխինը: Վերջինս համոզված է, որ Մաքսային միությունը Հայաստանի համար տնտեսական առավելություններ ստանալու միջոց է, և Հայաստանը պետք է առավելագույն օգուտ քաղի դրանից. «Սխալ կլինի, եթե Հայաստանը սպասի, որ իր կարևորագույն խնդիրները կլուծվեն Միությունն մտնելու հետ մեկտեղ: Այդպես չի լինի, քանի դեռ չկա ակտիվ դիրքորոշում Հայաստանի կողմից: Հայաստանը ոչ թե պետք է սպասի, թե ինչ կտան իրեն Մաքսային միությունում, այլ, ակտիվ դիրքորոշումների արտահայտմամբ, պետք է փորձի վերցնել այն լուծումները, որոնք իրեն են անհրաժեշտ»: Նա նաև համոզված է, որ հայերս պետք է սկսենք լրջորեն պատրաստվել առարկայական բանակցությունների, որտեղ պետք է պարզ ու հասկանալի շարադրվեն Հայաստանի շահերն ու սպասելիքները:

Ըստ տեսաբանների վերլուծության՝ Մաքսային միությունը Հայաստանի համար.

- Բաց 200 միլիոնանոց ռուսաստանյան, ղազախական

և բելառուսական շուկա է հայկական ապրանքների համար

- Աշխատանքի ավելի լավ պայմաններ են և սոցիալական փաթեթ
- Աշխատավարձերի ավելացում է և աշխատանքի տեղավորման հնարավորություններ
- Նոր աշխատատեղեր Հայաստանում
- Լեռնային Ղարաբաղի տնտեսական կայունացում
- Հայաստանի անվտանգության ամրապնդում Ռուսաստանի, Ղազախստանի և Բելառուսի հետ տնտեսական ինտեգրման միջոցով
- Ներքին համախառն արդյունքի 4-4,5% լրացուցիչ աճ Հայաստանի տնտեսության համար
- Ավտոմոբիլային և երկաթուղային ճանապարհների զարգացում, տրանսպորտային շրջափակման ճեղքում
- Քաղաքացիների տեղաշարժման ազատություն Մաքսային միության տարածքում
- Գազի և վառելիքի գների իջեցում:

Ձեկուցումներում քննարկվեցին հայ-ռուսական համագործակցության զարգացմանը, էներգետիկային և տրանսպորտին, հեռահաղորդակցման և տեխնոլոգիաների ոլորտին, գործարար աշխարհին վերաբերող հարցեր:

Ձեկուցումների վերջում հնչեցին Հայաստանի Մաքսային միությանը միանալուն առնչվող բազմաթիվ այլ հարցեր: Կոնֆերանսի մասնակիցները նման քննարկումը գնահատեցին արդյունավետ: Համաժողովին հնչած մտքերն ու դատողությունները հնարավորություն տվեցին բոլոր ներկաներին պատկերացում կազմել Եվրասիական ինտեգրացիայի արդի վիճակի ու տեսանելի հեռանկարների, դրանցում մեր մասնակցության իրական ձևերի ու հնարավորությունների վերաբերյալ:

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ ԱՆՄԵՂ ԶՈՏԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻՆ



Դատապարտման խնդիրը պետք է տեղափոխել իրավական դաշտ

Վանաձորի պետական համալսարանի պատմության, գրականության և արվեստի ամբիոնները մշակույթի կենտրոնի աջակցությամբ կազմակերպել էին Հայոց մեծ եղեռնի 99-րդ տարելիցին նվիրված միջոցառում:
Երկաները նախ մեկ րոպե լռությամբ հարգեցին անմեղ զոհերի հիշատակը:
Հայկական կոտորածներից շատ տասնամյակներ հետո էլ թուրքիայի քաղաքական և պետական գործիչներն

Մախրոդների ոճիրներն ու անմարդկային արարքները:
Միջոցառման ընթացքում զեկուցումով հանդես եկավ Վանաձորի «Արծվաշեն և որդիներ» հայրենակցական հկ նախագահ, պ. գ. թ., դոցենտ Յուրա Ղուլյանը: Նա այն համոզմանն է, որ ցեղասպանություն գործընթացը չի ավարտվի այնքան ժամանակ, քանի դեռ մարդասպանը չի ընդունել այն. «Հայերի ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում պատմության չավարտված գլուխն է, քանի դեռ մարդասպանը չի դատապարտվել: Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացը սկսել է տասնամյակներ առաջ և այժմ էլ շարունակվում է, որի ընթացքում գրանցել է հաջողություններ ու առաջընթաց, սակայն դա տևական գործընթաց է, եթե նկատի ունենանք, որ աշխարհում տեղի են ունենում նոր քաղաքական իրադարձություններ, աշխարհաքաղաքական նոր վերադասավորումներ: Կարծում եմ ժամանակն է, որ հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացից անցում կատարվի միջազգային դատապարտմանը, հարցը տեղափոխվի միջազգային դատարան, այլ կերպ ասած՝ ցեղասպանության միջազգային ճանաչումը քաղաքական ոլորտ է, իսկ դատապարտման խնդիրը պետք է տեղափոխել իրավական դաշտ: Այս ուղղությամբ պետք է կենտրոնացնել մեր ներուժը ՀՀ-ում և Սփյուռքում»:
Զեկուցումից հետո օրվա խորհրդին համահունչ երաժշտական կատարումներով հանդես եկավ ՎԳՀ երգչախումբը:



իրենցից դեռ չեն վանել հայ ժողովրդի նկատմամբ ունեցած քեճն ու ոխը և մտադիր չեն դատապարտել իրենց

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՈԳՈՎ ՏՈԳՈՐՎԱԾ

1915 թ. օսմանյան թուրքերի կողմից իրականացված ոճիրը խոր հետք թողեց հազարամյակների պատմությունում ունեցող հնամենի հայ ժողովրդի ճակատագրի վրա:
Շուրջ մեկ դար մեր տառապյալ ազգը մարդկային անսահման կորուստների վշտի բեռը դեռ չթրթափած՝ իր բողոքի ձայնն է բարձրացնում առ աշխարհ:
Ամմասն չմնաց նաև Վանաձորի Հոփ. Թումանյանի անվան պետական համալսարանը: Ապրիլի 23-ին Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում տեղի ունեցավ միջոցառում նվիրված Հայոց ցեղասպանության 99-րդ տարելիցին: Երգեցողության դասախոս Գ. Աղայանի ղեկավարությամբ միջոցառմանը մասնակցեցին նաև մանկավարժության ֆակուլտետի

«Մանկավարժություն և մեթոդիկա» մասնագիտության 2-րդ կուրսի ուսանողները: Նրանք միացան ջահերով երթին՝ Սբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցուց ուղևորվելով Սբ Աստվածածին եկեղեցի: Եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշակոթողի մոտ տեղի ունեցած ոգեկոչման արարողությունից հետո ուսանողները հնչեցրին ռազմա-հայրենասիրական երգեր: Հայրենասիրական ոգով տոգորված, մարտական տրամադրությամբ նրանց միացան նաև երթի մյուս մասնակիցները:
Տաթև ՏՈՆՈՅԱՆ
«Մանկավարժություն և մեթոդիկա», 2-րդ կուրս



ՀՈՒԱՎ-ի ստուգայցը ՎՊՀ



Մայիսի 13-ին ՎՊՀ էին այցելել Հայաստանի ուսանողական ազգային ասոցիացիայի քարտուղարության անդամները: Այցի նպատակն էր ճշտել, թե որքանով է համապատասխանում ՎՊՀ ուսխորհրդի գործունեությունը ՀՈՒԱՎ-ի գործունեությանն ու արժեքներին, որպեսզի այն թեկնածուից կազմակերպության լիիրավ անդամ դառնա: Անդամակցության համար բուհը նախօրոք դիմում էր ներկայացրել:

Ըստ օրակարգի՝ հյուրերը հանդիպումներ ունեցան համալսարանի ռեկտոր, Բ. Գ. Դ., պրոֆեսոր Գուրգեն Խաչատրյանի, ուսխորհրդի նախագահ Հենրի Մատինյանի, ուսանողական խորհրդի նախագահության անդամների, ակտիվ անդամների և այն ուսանողների հետ, ովքեր ընդգրկված չեն ուսանողական խորհրդում: Գ. Խաչատրյանի հետ հանդիպման ժամանակ ՀՈՒԱՎ-ի քարտուղարության անդամները ներկայացրին կազմակերպության գործունեությունը, այնուհետև կողմերը պատասխանեցին հնչած հարցերին: Հարցին, թե որ ուղղությամբ կցանկանար իր գործու-

նեությունը ծավալել ուսխորհուրդը, Գ. Խաչատրյանը պատասխանեց. «Քանի որ մենք ունենք սոցիալական խմբեր, պետք է ուսանողների բոլոր խավերի միջև համահարթեցում անենք: Իմ նպատակն այն է, որ ուսանողն այստեղ իրեն զգա ինչպես իր տանը, իսկ դա կարող է այդ համահարթեցման շնորհիվ լինել»:

Ստուգայցի վերջում ՀՈՒԱՎ-ի քարտուղարության անդամները շրջեցին համալսարանում: Եղան գրադարաններում, ճաշարանում, Ս. Մերգելյանի անվան համակարգչային կենտրոնում, գլխավոր մասնաշենքի մի քանի կաբինետներում ու լսարաններում, ինչպես նաև համալսարանի դահլիճում:

Վանաձորի պետական համալսարանի անդամակցությունը հաստատապես կորոշվի հունիսի 13-ից 15-ը կայանալիք ընդհանուր ժողովում, որին կմասնակցեն անդամակից բուհերի պատվիրակները և 4 պատվիրակ ՎՊՀ-ից: Վերջիններիս խնդիրը պետք է լինի բուհը ներկայացնելը, ինչը պետք է արվի նաև ասոցիացիայի հաշվետվության հիման վրա:

Մարինե ՍԱՐՅԱՆ
«Լրագրություն», 1-ին կուրս

ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՂԱԶԱՆՍՏԱՆԻ ՀԵՏ



ՀՀ-ում Ղազախստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Այիմդուս Բոզժիգիտովի գլխավորությամբ պատվիրակությունը վերջերս հանդիպում ունեցավ ՎՊՀ պրոֆեսորադասախոսական կազմի, ուսանողների հետ:

Գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր Արեն Սանթրյանը ողջունեց հյուրերին և հույս հայտնեց, որ հանդիպումը կնպաստի երկու երկրների բուհերի միջև նոր ծրագրերի իրականացմանը:

Հանդիպման նպատակն էր ամրապնդել համագործակցությունը երկու ժողովուրդների բուհերի միջև, ինչպես նաև ներկաների ուշադրությանը ներկայացնել Ղազախստանի ավանդույթները, սովորույթները, կենցաղը, նրա մշակութային ժառանգությունը, ազգամիջյան հարաբերություն-

ներն ու ֆինանսատնտեսական ձեռքբերումները: Ծիշտ է, Ղազախստանն ու Հայաստանը սահմանակից պետություններ չեն, սակայն դա չի խանգարում ունենալ դիվանագիտական լավ հարաբերություններ: Հանդիպման ընթացքում հնչած զեկույցները ներկայացրին ոչ մեծ պատմական ակնարկ Ղազախստանի, «Ղազախստան ճանապարհ – 2050» նոր նախագծի մասին:

Ներկաներին հնարավորություն ընձեռնվեց ձեռք բերել «Եվրոպական ինտեգրացիա» հկ-ի, «Արմեդիա» ՏՎԳ-ի և ՀՀ-ում Ղազախստանի հանրապետության դեսպանության համագործակցության շնորհիվ տպագրված «Ղազախստան. հաջողության գաղտնիքներ» գիրքը:



Միասնական պայքար փողոցային արատավոր բարքերի դեմ



Վանաձորի պետական համալսարանում տեղի ունեցավ «Պայքար փողոցային արատավոր բարքերի դեմ» թեմայով գիտաժողով: Մասնակցում էին ՎՊՅ պրոֆեսորադասախոսական կազմը և ուսանողներ, ՀՀ պաշտպանության նախարարության, ՀՀ ոստիկանության ներկայացուցիչներ:

Գիտաժողովը կազմակերպել էին ՀՀ ՊՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչությունը, Ջարգացման ծրագրերի հայկական կենտրոնը և Վանաձորի պետական համալսարանը:

Գիտաժողովի մասնակիցներին ողջունեց ՎՊՅ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Սուսաննա Թումանյանը: Նրա կարծիքով՝ գիտաժողովի թեման արդիական է: Նա բոլոր մասնակիցներին մաղթեց արդյունավետ աշխատանք, ինչպես նաև խոսեց հասարակության համար արատավոր երևույթների կանխարգելման և երիտասարդ սերունդի ճիշտ դաստիարակության առումով բուհում կատարվող աշխատանքների մասին:

Ձեկուցումով հանդես եկավ ՀՀ ՊՆ տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության բաժնի պետ, գեղապետ Վանիկ Մինասյանը, ով ներկայացրեց այն աշխատանքները,

որոնք կատարվում են նախագորակոչային տարիքի երիտասարդների շրջանում նպատակ ունենալով նրանց մեջ սերմանել հայրենասիրություն, ամրապնդել հայրենիքի նկատմամբ իրենց սրբազան պարտքի գիտակցումը: Աշխատանքներին ավելի մանրամասն ծանոթանալու համար գիտաժողովի մասնակիցներին տրվեցին «Բանակը մեր տունն է, մեր ամրոցը» վերնագրով գրքույկներ, որոնք կոչ են անում դպրոցը, բուհն ու բանակը դարձնել արատավոր երևույթների դեմ պայքարի ամրոցներ և միասնական պատերազմ հայտարարել փողոցային արատավոր բարքերին:

ՎՊՅ հոգեբանության և սոցիոլոգիայի ամբիոնի վարիչ, հոգեբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ռոդիկ Ավագիմյանը զեկուցեց դեռահասների շրջանում սոցիալական ցանցերի ազդեցության մասին. «Անվիճելի է, որ սոցիալական ցանցերը մեծ հնարավորություն են ընձեռում ինֆորմացիայի ձեռք բերման, ինքնագարգացման, ուսումնական գործունեության, սեփական բիզնեսի զարգացման համար, բայց այս հնարավորությունների հետ մեկտեղ դրանք ունեն բացասական ազդեցություն հատկապես աճող սերունդի՝ դեռահասների շրջանում: Երկար ժամանակ անցկացնելով սոցիալական ցանցերի դիմաց՝

դեռահասների ուղեղը զբաղված է լինում անմիտ և աննպատակ ակտիվությամբ, որը չի կարելի համարել ինտելեկտուալ աշխատանք: Դեռահասները սկսում են արկածներ փնտրել, քիչ ուշադրություն դարձնել ուսուցմանը և տարբեր սոցիալական գործառույթների իրականացմանը»:

Մանկավարժական գիտությունների թեկնածու Արեգնազ Սարգսյանն իր զեկուցման մեջ խոսեց աշակերտների շրջանում արատավոր երևույթների կանխարգելման գործում դպրոցի դերի մասին: Դպրոցականներին բացասական երևույթներից զերծ պահելու համար Ա. Սարգսյանը կարևորեց դասավանդման ընթացքում հիմնարար արժեքների՝ հայրենիքի, ընտանիքի, մարդկային փոխհարաբերությունների, սոցիալական պատասխանատվության և հանդուրժողականության գաղափարների քարոզումը:

Տեր Վահան քահանա Ազարյանը համոզված էր, որ դպրոց-բուհ-բանակ շղթան ամուր պահելու համար անչափ կարևոր է մարդու դաստիարակության հիմքում դնել հոգևոր կրթությունը, այլապես մենք կկորցնենք մեր մարդկային տեսակն ու ազգային արժեքները:

Առանձին զեկուցումներում քննարկման առարկա դարձան դեռահասների շրջանում դրսևորվող մի շարք այլ խնդիրներ:

←4 Դեսպանն իր խոսքում նշեց, որ հայ-դազախական բարեկամական հարաբերությունները խոր արմատներ ունեն: Ղազախստանում հայկական մեծ համայնք կա, որն իր ակտիվ մասնակցությունն է բերում երկրի տնտեսական, քաղաքական և մշակութային կյանքին:

Ղազախստանն ակտիվորեն զարգացնում է կրթական համակարգը և որակավորված մասնագետների նախապատրաստումը: «Բոլոչակ» ծրագրի շնորհիվ ուսանողները

իր հնարավորություն ունեն արտասահմանում սովորելու: Ակտիվ գործում է նաև արտասահմանից լավագույն մասնագետներին երկիր հրավիրելու պետական երկարաժամկետ ծրագիրը: Ուսանողների նպատակը մեկն է՝ ոչ թե պարզապես դիպլոմ ստանալ, այլ դառնալ լավ մասնագետներ:

Հանդիպմանը քննարկվեցին նաև փոխսահմագործակցության հետագա ուղիներն ու դրանց իրականացման հնարավորությունները:

ՍԵՎԱԿԻՆ լիարժեք ճանաչել է պետք

ՎՊԶ բանասիրական ֆակուլտետի գրականության ամբիոնի նախածեռնությամբ և մշակույթի կենտրոնի աջակցությամբ համալսարանի դահլիճում տեղի ունեցավ Պարույր Սևակի ծննդյան 90-րդ տարեդարձին նվիրված միջոցառում:

Միջոցառման ներկաներին ողջունեց գրականության ամբիոնի վարիչ Վ. Փիլոյանը: Գրականագետը նշեց, որ Սևակ բանաստեղծի մասին այս տարիներին թյուր առասպելներ են ձևավորվել, որոնք կապ չունեն մարդու իրական կյանքի հետ, և որ եկել է ժամանակը՝ ստեղծելու Սևակի ճշմարիտ գիտական կենսագրությունը: Այս ճանապարհին բանաստեղծի կյանքի որոշ հանգույցներ է բացահայտում գրականության ամբիոնի դասախոս Գ. Մալունյանը, ով ներկայների ուշադրությանը ներկայացրեց ոչ սովորական մի զեկուցում՝ «Իմ Սևակը»: Հեղինակի համոզմամբ՝ այն տազնապի մի ահագանգ է, մտահոգությունից ծնված հարցադրումների շարք: Սևակի մահից երկար տարիներ են անցել, սակայն նրա կյանքին ու ստեղծագործությանն առնչվող մի շարք հարցեր դեռևս մնացել են անպատասխան:

Գ. Մալունյանին մասնավորապես մտահոգում է այն իրողությունը, որ Սևակի անտիպ ժառանգությունը մինչև հիմա փակի տակ է: Անգամ հայտնի չէ՝ պահպանվել են արդյոք պատահիկներ նրա անավարտ գործերից: Գ. Մալունյանը նշում է. «Ստավախություն ունեն, որ երբ արխիվային նյութերն ի վերջո տպագրվեն, ընթերցողը կպակասի: Բանաստեղծական տարբերակները, ծանոթագրությունները, իմաստային նուրբ դիտարկումները, նամակները... Նոր սերնդի քանի՞ տոկոսը կհետաքրքրվի դրանցով: Ցավով պիտի խոստովանել, որ հիմա ավելի շատ գրողի անունն է հոլովվում, քան նրա ստեղծագործություններն են ուսումնասիրվում: Հանրությանը քաջածանոթ և անվերջ շրջանառվող բանաստեղծություններն են զնահատման չափանիշ դարձել, մինչդեռ Սևակի մեծությունը իրապես խորհրդանշող երկերը քչերին են հայտնի: Ռեբրտների նման գլուխները լցնում են



միայն մատուցվող լրահոսով: Իսկ ովքե՞ր են ուսուցիչները: Վերջին տարիներին համակարգիչ նետված ոտանավորները, որոնք չգիտես ում թեթև ձեռքով հանիրավի վերագրվում են Սևակին և դարձել են նոր սերնդի ամենասիրված գործերը, մեր անտարբերության պատճառով ստվեր են նետում բանաստեղծի անվան վրա»:

Գրականագետն անդրադարձավ նաև բանաստեղծի սրտի հետ կապված պատմությանը, որը նույնպես պարզված չէ: 2007 թ. հրատարակված «Իմ Պարույրը» գրքում դատավոր, իրավաբան Աշոտ Թադևոսյանը պնդում է, որ բանաստեղծի սիրտը ինքն է հերձման ժամանակ վերցրել՝ մեծ դժվարությամբ համոզելով Ասատուր անունով բժշկին (մոլեռանդ սևակապաշտը ծնկաչոք լաց է եղել, խաբել է, թե պանթեոնում են թաղելու, ի վերջո կաշառել է, ինչպես ինքն է ասում՝ շահագրգռել): Հարցի շուրջ Գ. Մալունյանը խոսել է Սևակի որդիների հետ: Կոյունն այն կարծիքին է եղել, որ Աշոտ Թադևոսյանը չպետք է նման բան աներ. նա իր արարքի զոհն է դարձել: Իսկ Արմենը պատասխանել է. «Դա իմ հոր սիրտը չէ. ԴՆԹ էլ արեցինք, արդյունք չտվեց: Այն տարիներին ո՞վ թույլ կտար նման բան անեին: Ես չեմ կարող հավատալ»: ԴՆԹ հետազոտությունը չի կարող երևան հանել իրողությունը, որովհետև բանաստեղծի սիրտը պահվել է ֆորմալինի մեջ, նշում է հեղինակը. «Փաստորեն գիտությունը դեռ ի վիճակի չէ այդ հարցը պարզելու, և եթե մի փոքր կասկած կա, որ դա Սևակի սիրտն է, մնում է սպասել և հուսալ, որ երբևէ կբացահայտվի ճշմարտությունը»:

ԴԻՏԱՐԺԱՆ ՓՈՐՉ



Վանաձորի պետական համալսարանում շարունակվում են բուհ-դպրոց կապերի շրջանակներում իրականացվող միջոցառումները: Օրերս ՎՊԶ-ում էին հյուրընկալվել Վանաձորի Սոսի անվան թիվ 13 ավագ դպրոցի բնագիտական հոսքի 10-րդ «գ» դասարանի աշակերտները՝ ֆիզիկայի ուսուցչուհի Զ. Նազարյանի ուղեկցությամբ:

Աշակերտների համար բուհի լաբորատորիաներից մեկում կազմակերպվեց դիտարժան փորձերի ցուցադրում: Դասախոս Լ. Սոֆյանն աշակերտներին ցուցադրեց մաթեմատիկական ճոճանակի, Ատվուդի մեքենայի կառուց-

վածքը և աշխատանքի սկզբունքը: Տարբեր հանձնարարությունների միջոցով աշակերտները հաշվեցին ազատ անկյան արագացումը, իսկ Օբերբեկի սարքավորման միջոցով՝ իներցիայի մոմենտը:

Դիտարժան փորձի ընթացքում աշակերտները լաբորատոր սարքավորման

միջոցով հաշվեցին նաև ձայնի տարածման արագությունը: Փորձի ամբողջ ընթացքում դպրոցականները ակտիվ ցուցադրում էին իրենց գիտելիքները և պատասխանում ուսուցչուհու բոլոր հարցերին:

Բաց դասի վերջում Զ. Նազարյանը կատարված փորձերի հիման վրա աշակերտներին հանձնարարեց փորձնական տվյալների և չափումների միջոցով տանը հաշվել վերոնշյալ պարամետրերը:

Գործնականում ի ցույց դնելով կարողությունները՝ աշակերտները մեծ տպավորություններով հեռացան բուհից:

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵՎ ԶԱՎԵՆ ԵՎՈՅԱՆԻՆ

Մայիսի 8-ին մի շարք պաշտոնյաներ, Երկրապահ կամավորականների միության անդամներ, զինվորականներ այցելեցին «Եռաբլուր» պանթեոն՝ հարգանքի տուրք մատուցելու Ղարաբաղյան պատերազմի զոհերի հիշատակին: Նրանք ծաղիկներ դրեցին Վազգեն Սարգսյանի և մյուս հերոսների շիրիմներին:

Այնուհետ Երկրապահ կամավորականների միության անդամները այցելեցին Էջմիածնի Մայր տաճար և մասնակցեցին Սուրբ պատարագի՝ զոհված, անհայտ կորած մարտական ընկերների հոգիների հանգստության համար:

Օրվա վերջում տեղի ունեցավ հանդիսավոր միջոցառում, որտեղ պարգևատրվեցին մի շարք ազատամարտիկներ:

Նախագահ Սերժ Սարգսյանի հրամանագրով Երկրապահի օրվա կապակցությամբ «Մարտական ծառայության» մեդալով պարգևատրվեց ազատամարտիկ, Վանաձորի պետական համալսարանի ֆիզիկական դաստիարակության տեսության և մեթոդիկայի ամբիոնի վարիչ, դոցենտ Զավեն Էվոյանը:



«Շնորհավորում եմ բոլոր ազատամարտիկներին և հայրենական մեծ պատերազմի մասնակից վետերաններին: Գլուխ եմ խոնարհում բոլոր զոհվածների շիրիմներին և ցանկանում եմ, որ մեր այս բազմաչարչար երկրի վրա ոչ մի անգամ պատերազմ չլինի և մեր մանուկները մեծանան կապույտ երկնքի տակ», – սասց Զ. Էվոյանը:

Ապրիլի 29-ին Դիլիջանի արվեստի քոլեջում տեղի ունեցավ ՎՊՀ «Երաժշտական կրթություն» մասնագիտության ուսանողական երգչախմբի համերգը: Երգացանկը բազմազան էր՝ հայ հոգևոր երաժշտություն, արևմտաեվրոպական, հայկական, ռուսական դասական, ինչպես նաև ժամանակակից հեղինակների ստեղծագործություններ: Համերգի ընթացքում հնչեց ՎՊՀ-ի օրհներգը, որը հեղինակել է արվեստի ամբիոնի վարիչ, կոմպոզիտոր Հայկուհի Հակոբյանը, ինչպես նաև ուսանողական երգչախմբի համար գրված նրա նոր ստեղծագործությունը: Ուշագրավն այն էր, որ երգչախումբը ղեկավարում էին 3-րդ և 4-րդ կուրսերի ուսանողները, որոնք ծրագիրը պատրաստել էին հմուտ դասախոսներ Սերգեյ Հարությունյանի և Ռուբինա Ամիրբեկյանի ղեկավարությամբ: Երգչախմբին նվագակցում էին «Երաժշտական կրթություն» մասնագիտության երիտասարդ և խոստումնալից դասախոսներ Գայանե Աղայանը և Սյուլզաննա Փոթինյանը:



Դիլիջանի արվեստի քոլեջի դասախոսները և ուսանողները հիացած էին ՎՊՀ ուսանողների ելույթներով, որի վկայությունը երկարատև հոտմկայս ծափահարություններն էին: Համերգի վերջում քոլեջի տնօրեն Հասմիկ Սկրտունյանը շնորհակալություն հայտնեց բարձրաճաշակ համերգի համար և հույս հայտնեց, որ այն կոզևորի տեղի աշակերտներին և քոլեջի սաներին՝ իրենց կրթությունը շարունակելու համար: Եզրափակիչ խոսքով հանդես եկավ մանկավարժության ֆակուլտետի ղեկան Թերեզա Շահվերդյանը՝ շնորհավորելով համերգի մասնակիցներին:

Դիլիջանում ուսանողական համերգի կազմակերպմանը աջակցել է ՎՊՀ ռեկտոր Գուրգեն Խաչատրյանը, ում հայտնում ենք մեր շնորհակալությունը:

«Երաժշտական կրթություն» մասնագիտության մի խումբ ուսանողներ

Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական համալսարանը հայտարարում է 2014-2015 ուս. տարվա ընդունելությունը բակալավրի կրթական ծրագրի հետևյալ մասնագիտություններով.

Պատմություն, Իրավագիտություն, Սոցիալական աշխատանք, Կառավարում, Հայոց լեզու և գրականություն, Անգլերեն լեզու, Ռուսաց լեզու և գրականություն, Մանկավարժություն և հոգեբանություն, Մանկավարժություն և մեթոդիկա (տարրական կրթություն), Սոցիալական մանկավարժություն, Մաթեմատիկա, Ֆիզիկա, Ինֆորմատիկա, Կենսաբանություն, Դեղագործական քիմիա, Ֆիզիկական կուլտուրա և սպորտ:

Փաստաթղթերն ընդունվում են

մայիսի 5-ից հունիսի 1-ը ներառյալ (Ժամը՝ 9⁰⁰-17⁰⁰):

Մանրամասն տեղեկությունների համար զանգահարել (0322) 4-22-28 հեռախոսահամարով:



ՎՊՅ ՀԵՆԱԿԵՏԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆԸ՝ 1-ին տեղում

(սկզբում՝ բանավեճեր վարժարանի ներսում, ապա՝ ընկերական խաղեր Վանաձորի այլ դպրոցների հետ):

2014 թ. մեկնարկ տրվեց մրցութային բանավեճերին: Խաղերից հետո հավաքականը Վանաձորի տարածաշրջանում զբաղեցրեց 2-րդ հորիզոնականը և իրավունք ստացավ 1 խաղացող ուղարկելու հանրապետական փուլ: 2014 թ. մայիսի 1-3-ը կայացավ հանրապետական փուլը, որին մասնակցեց Սուրեն Ղազարյանը:

Շուրջ 5 տարի է, ինչ «Ջինիշյան հիշատակի հիմնադրամը», համագործակցելով այլ կառույցների հետ, անցկացնում է «Երիտասարդները՝ ներգրավված հասարակության մեջ» ծրագիրը, որի շրջանակներում կազմակերպվում են բանավեճեր Հայաստանի դպրոցների միջև: ՎՊՅ հենակետային վարժարանի հավաքական թիմի անդամները՝ Թամարան, Լիանան, Ռոզան, Սուրենը, Էմման, Արփինեն, պատմության ուսուցիչ Գագիկ Ժամհարյանի ղեկավարությամբ սկսեցին բանավեճել 2013 թվականի դեկտեմբերից

մեկնած մյուս հավաքականի հետ՝ մեր խումբը զբաղեցրեց մրցութային առաջին տեղը:

Այսպիսով՝ ՎՊՅ հենակետային վարժարանն այս տարի ևս պատվավոր մասնակցություն ցուցաբերեց բանավեճի ծրագրին:

Շնորհակալություն ենք հայտնում «Ջինիշյան հիշատակի հիմնադրամին» և շնորհավորում խմբի անդամներին, հենակետային վարժարանի բանավեճի ակումբի ղեկավար Գագիկ Ժամհարյանին:

ԳԵՐԱԶԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ



Մայիսի 7-ին Վանաձորի ՊՄՏՀ-ում (ԴՕՍԱԱՖ) տեղի ունեցան Շուշիի ազատագրման 22 և Հայրենական Մեծ պատերազմում տարած հաղթանակի 69-ամյակներին նվիրված ռազմակիրառական բազմամարտի գծով Վանաձորի ՊՄՏՀ խորհրդի փոխանցիկ գավաթի խաղարկման մրցումներ: Մասնակցում էին Վանաձորի 30 դպրոցների հավաքական թիմերը բազմամարտի 4 ձևերից՝ հրաձգություն, նռնակի նետում, ինքնաձիգի քանդում-հավաքում և ձգումներ պտտածողի վրա:

Մրցումներին գերազանց մասնակցություն ունեցավ ՎՊՅ հենակետային վարժարանի հավաքական թիմը, որը գրավեց 2-րդ պատվավոր տեղը:

Անհատական մրցումներում վարժարանի սան Էրիկ Զարգարյանը գրավեց 2-րդ տեղը և պարգևատրվեց արծաթե մեդալով:

Թիմը մրցումներին նախապատրաստել էր վարժարանի զինղեկ Շ. Շահինյանը:

Ի դեպ, Վանաձորի դպրոցներում ռազմահայրենասիրական աշխատանքների կատարման 2013 թվականի ամփոփիչ արդյունքներով Վանաձորի պետական համալսարանի հենակետային վարժարանը գրավել է 2-րդ տեղը:

«Ապագա մանկավարժ»
երկաթաթերթ
Վկայական՝ 727
2001, ՀՀ, Վանաձոր,
Տիգրան Մեծի 36
Էլ. փոստ՝ mankavarzh@mail.ru

Հիմնադիր՝ ՎՊՄԻ
Հրատարակիչ՝
«Ապագա մանկավարժ»
երկաթաթերթի խմբագրություն
Տպաքանակը՝ 100
Տպագրվել է ՎՊՅ-ի տպարանում

Խմբագիր՝ Լևոն ՍԱՐԳՍՅԱՆ
Պատասխանատու՝ Անի ԽԱՉԱՏՐՅԱՆ
Համակարգչային ձևավորումը՝ Աշխեն ԳԱԼՍՏՅԱՆ
Լուսանկարները՝ խմբագրության